

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երևան 2018

Հայցի ներածական մասի վերաբերյալ առաջարկներ

- ▶ Հայցի ներածական մասում պետք է առաջնորդվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի պահանջներով, մասնավորապես.
- ▶ չի նշվում պատասխանողի, երրորդ անձի անձնագրային տվյալները (իրավաբանական անձի դեպքում ՀՎՀՀ, պետական գրանցման վկայականի համարը և այլն),
- ▶ թե՛ հայցվորի և թե՛ պատասխանողի դեպքում նշվում է այն հասցեն, որտեղ մշտապես կամ առավելապես բնակվում է անձը,
- ▶ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (այլ ոչ թե հաշվառման) վայրի դատարան, հիմքում ունենալով քաղ. դատ. օր-ի 12-րդ գլուխը,
- ▶ Եթե ներածական մասում նշում ենք ներկայացուցչի տվյալները, ապա ներկայացուցչի հասցեն ցանկալի է նշել ծանուցման հասցե:

Հայցի նկարագրական մասի վերաբերյալ առաջարկներ

- ▶ Անհրաժեշտ է խստագույնս պահպանել հայցի տեխնիկական մասի պահանջները, մասնավորապես աշխատանքը պետք է լինի ՀԱՅԵՐԵՆ
- ▶ Եթե հայցի փաստերը համարակալում ենք, ապա յուրաքանչյուր կետ որպես կանոն պետք է արտահայտի մեկ փաստ կամ փաստեր, որոնք արտահայտում են մեկ իրավական միտք,
- ▶ համարակալումը չի կարող լինել ինքնանպատակ, այդ գործիքը մենք օգտագործում ենք այն դեպքում, երբ անհրաժեշտ է հայցի պատճառաբանական մասը կապել նկարագրական մասի հետ (օրգանական կապ),
- ▶ անթույլատրելի է, երբ փաստերը վկայակոչվում են «չոր» առանց դրանք նկարագրելու: Փաստերը պետք է լինեն ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ,
- ▶ Եթե չեք կողմնորոշվում, ապա ավելի լավ է փաստերը վկայակոչել ամբողջությամբ, քան կրճատել և չնշել որևէ փաստ որը հետագայում կարող է էական նշանակություն ունենալ

Հայցի պատճառաբանական մասի վերաբերյալ առաջարկներ

- ▶ Ուշադրություն - իրավաբանը պետք է տեսնի այն, ինչը ոչ իրավաբանի աչքից կարող է վրիպել,
- ▶ անթույլատրելի է այն դեպքերը, երբ տեքստում առկա է որևէ փաստ, սակայն դա չի նկատվում իրավաբանի կողմից (ծրագրավորողների «թեորեմ» համակարգչի վերբեռնում),
- ▶ պատճառաբանական մասում պահպանում ենք կարճ և դիպուկ գրելաոճը, խոսափում ենք հայրենի լեզվի ընձեռած լեզվական հարստությունից,
- ▶ պատճառաբանական մասն առավելապես իմպերատիվ ոճի է, անթույլատրելի է հարցական նախադասությունների չարաշահումը,
- ▶ նորմերը վկայակոչվում են կոնկրետ, անթույլատրելի է ամբողջ նորմի վկայակոչումը, եթե այն չի առնչվում վերլուծությանը,

Հայցի պատճառաբանական մասի վերաբերյալ առաջարկներ

- ▶ նորմերը վկայակոչվում են ըստ աստիճանակարգի - օրենսգիրքը-օրենք-կառավարության որոշում և այլն,
- ▶ եթե ներածական մասում նշվել է երրորդ անձ, ապա յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորվի քաղ. դատ. օր-ի 34-րդ կամ 35-րդ հոդվածները, եթե դա անհնար է, ապա չպետք է նշվի երրորդ անձ, այն թողնելով նախապատրաստական փուլում պարզվող հարցերի շարքում,
- ▶ նկարագրական և պատճառաբանական մասերի օրգանական կապը պետք է ձևավորի հայցի առարկան՝ նյութաիրավական պահանջն ուղղված պատասխանողին,
- ▶ անհրաժեշտ է հայցը հստակ բաժանել մասերի (ներածական, նկարագրական, պատճառաբանական, եզրափակիչ):

Հայցի եզրափակիչ մասի վերաբերյալ առաջարկներ

- ▶ Եզրափակիչ մասում առաջնորդվում ենք միայն դատավարական նորմերով, նյութական իրավունքի նորմերը վկայակոչվում են միայն պատճառաբանական մասում (հայցի հասկացություն),
- ▶ հայցի ապահովման միջնորդությունը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, պետք չէ անել միջնորդություններ, որոնք հիմնավորված ու պատճառաբանված չեն,
- ▶ պետական տուրքի արտոնություն սահմանելու միջնորդությունը պետք է հիմնված լինի որոշակի փաստերի վրա առանց որի չպետք է նման միջնորդություն արվի,
- ▶ Փաստաբանական հոնորարը որպես դատական ծախս բռնագանձելու միջնորդությունը պետք է հիմնված լինի որոշակի փաստերի վրա, առանց որի չպետք է նման միջնորդություն անել,

Հայցի եզրափակիչ մասի վերաբերյալ առաջարկներ

- ▶ կից ներկայացնում են փաստաթղթերի մեջ պետք է լինի բոլոր այն փաստաթղթերը որը պահանջվում է քաղ. դատ. օր-ի 88-րդ հոդվածը, մասնավորապես.
- ▶ պետական տուրքը կամ միջնորդություն արտոնություն սահմանելու վերաբերյալ,
- ▶ ներկայացուցչի լիազորագիրը, եթե հայցը ներկայացվել է ներկայացուցչի միջոցով,
- ▶ հայցապահանջը հաստատող ապացույցները (դիսպոզիտիվ):

ՀԱՅՑԻ ՊԱՏԱՍԽԱՆ

- ▶ Հայցի պատասխանում չի նշվում հայցվորի անձնագրային տվյալները, իսկ իրավաբանական անձի դեպքում ՀՎՀՀ-ն և այլն: Անհրաժեշտ է առաջնորդվել քաղ. դատ. օր-ի 95-րդ հոդվածի պահանջներով:
- ▶ Հայցի պատասխանի վերնագիրը պետք է լինի թիվ 00000 քաղաքացիական գործով:
- ▶ Հայցի պատասխանում պետք չէ ամբողջությամբ նկարագրել փաստերը, որոնք նկարագրվել են հայցվորի կողմից:
- ▶ Հայցի պատասխանը չունի գործի փաստեր վերտառություն:
- ▶ Հայցի պատասխանով պետք է ամբողջությամբ կամ մասնակի ժխտվի հայցը:
- ▶ Գործի փաստերը վկայակոչվում են հայցի փաստերն ու պահանջը ժխտելու միտումով կամ ներկայացվում է թե որքանով են հայցվորի վկայակոչած փաստերը էական նշանակություն ունեցող գործի լուծման համար:
- ▶ Եթե գտնում եք, որ պետք է կիրառվի հայցային վաղեմություն, ապա հայցի պատասխանի եզրափակիչ մասում պետք է նշվի «կիրառել հայցային վաղեմություն և հայցը մերժել»:

Հայցի պատասխանին կից ներկայացվող փաստաթղթեր

- ▶ Պատասխանին կից պարտադիր ներկայացվում է.
- ▶ Հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերը հայցվորին և գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցները
- ▶ Ներկայացուցչի կողմից հայցի պատասխանը ստորագրելու դեպքում նաև լիազորագիրը:
- ▶ Պատասխանին կից կարող է ներկայացվել նաև պատասխանողի տիրապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, որոնք հաստատում են պատասխանողի պնդած փաստերը:
- ▶ **Բոլոր ապացույցները որոնք ներկայացվում են հայցի պատասխանի հետ պարտադիր պետք է նշագրված լինի թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված:**

ՀՆՈՐՅԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

